

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ասեղճագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը՝ ստեղծելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

L. N. U. Z.

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐՔՈՒՅՑ № 5

ՍԱՆ-ՀԱՌԵՋԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՍԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՅԵՆԹԱԲԱԺՆԻ

ԱՆՎԻ ՄԻ ՔԱՆԻ ՏԱՐԱՆՎԱԾ

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Հրատարակություն Առժողկոմատի

1926

L. H. U. Z.

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ
ՀԱՆՐԱՄԱՏԶԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐՔՈՒՅՑ № 5

ՍԱՆ-ՀԱՄԱՃԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՍԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՅԵՆԹԱԲԱԺԻՆ


ՄԱԾԿԻ ՄԻ ՔԱՆԻ ՏԱՐՁԵՎԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԵՐԸ

002/6

A T 8681



Հրատարակություն Առժողկոմատի



Հ. Ա. Կ. Հ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՎ ՎԵՐԱԿՐՈՆ ԵՎ ՎԵՐԱԿՐՈՆ
Հ Ա ՎԵՐԱԿՐՈՆ ԵՎ ՎԵՐԱԿՐՈՆ

ՎԵՐԱԿՐՈՆ ԵՎ ՎԵՐԱԿՐՈՆ ԵՎ ՎԵՐԱԿՐՈՆ
ՎԵՐԱԿՐՈՆ ԵՎ ՎԵՐԱԿՐՈՆ ԵՎ ՎԵՐԱԿՐՈՆ

ՎԵՐԱԿՐՈՆ ԵՎ ՎԵՐԱԿՐՈՆ ԵՎ ՎԵՐԱԿՐՈՆ
ՎԵՐԱԿՐՈՆ ԵՎ ՎԵՐԱԿՐՈՆ ԵՎ ՎԵՐԱԿՐՈՆ

ՎԵՐԱԿՐՈՆ ԵՎ ՎԵՐԱԿՐՈՆ ԵՎ ՎԵՐԱԿՐՈՆ

Գրալեզ. 701 (բ.) Տիրաժ 3000 Պատվ. 3811

Տպագրական Տրեստի 2-րդ տպարան, Յերեվան

I

ՄԱՇԿ

Ի ատկություններ ունի մասկը


Մաշկը մի առանձին գործարան է և կատարում է իրեն հատուկ աշխատանքը մարդու կազմվածքի գոյության պաշտպանության համար։

Մաշկը թեև հաստ չե, բայց պարունակում է իր մեջ մարդու կյանքի համար շատ ու շատ անհրաժեշտ գործարաններ։

Մաշկը պատում է մարդու մարմինը դրսից և պաշտպանում է իրեն տակ գտնվող մարմնի մասերը արտաքին աշխարհի վնասակար ազդեցություններից։

Առաջին նկարը ցույց է տալիս թե՝ ինչ կազմ ունի մաշկը։ Նրա մեջ կան ներվեր, արյան անոթներ, քրտնքի և ճարպի գեղձեր, մազեր, սրանցից յուրաքանչյուրն ունի իր դերն և վոչ մի բան ավելորդ չե։

Տես նկար 1.



Նկար 1. Կորված մասեկ

1) մազ, **2)** ճարպի գեղձ, **3)** մազի պտուկ, **4)** բըր-
ենի գեղձ, **5)** ճարպի բլթակներ չենթամասեկի շեր-
տում, **6)** ներվային քելեր յեզ 7) արյան անորոներ

Մաշկը շատ ե յենթակա հարվածների և
միևնույն ժամանակ նա ունի մի լավ հատկու-
թյուն, շուտ վերականգնել իր կորցրած մասը:
Այդ բանը շատ լավ գիտեն բանվորներն ու գյու-
ղացիները, վորոնց մաշկը շատ հաճախ ե վեր-
բեր ստանում աշխատանքի ժամանակ:

Յեթե մաշկի վերքը փոքր ե, մաշկը վեր-

կանգնեցնում է իր կորցրած մասն ամբողջապես. յեթե վերքը մեծ է, մաշկի կորցրած տեղում սպի յե գոյանում. և այս բոլորը սովորաբար կատարվում է առանց մի վնասի մարդու համար. բայց յեթե մաշկի վերքը շատ է մեծ և վնասված է մաշկի ^{2/3}, այն ժամանակ մարդը մեռնում է. Ահա թե վորքան մեծ նշանակություն ունի մաշկը մարդու համար. ապա ուրեմն յուրաքանչյուր բանվոր և գյուղացի պետք է լավ խնամք տանի իր մաշկի մասին:

Ի՞նչ նօանակություն ունի մաշկը

Մաշկը պաշտպանում է մարդու մարմինը հարվածներից և նրա մեջ զանազան մանրեների մտնելուց:

Այս մաշկը վոր վերք ունի, շատ շուտ փխանցում է ողի մեջ յեղած վնասակար և ախտաբեր մանրեներն արյանը:

Ի՞նչ է համար իր բարեկարգությունը

Մաշկն արտադրում է քրտինք և ճարպ.

Քրտինքը հեռացնում է մարմինի միջից վնասակար և թունավոր դարձած նյութերը:

Յերբ մարդ հանգիստ է, քրտինքը դուրս է գալիս աննկատելի կերպով, գոլորշու ձևով, բայց

յերբ մարդ աշխատում ե, մանավանդ ամառ,
քրտինքը դուրս ե գալիս մեծ քանակությամբ և
հեղուկի ձևով:

ԵԵՀԻ⁸ ԻԿԱՄԱՐ Ե ՑԱՐՎԸ

Ճարպն արտադրում են մաշկի ճարպային
զեղձերը: Մաշկն ունի ծակոտիներ, վորոնց մի-
ջոցով արտադրում ե քրտինքն ու ճարպը: Ճար-
պը փափկացնում ե մաշկն և մազերը: ճարպի
շնորհիվ ե, վոր մաշկը չի չորանում և ճեղք-
վածքներ չի տալիս. ճարպի շնորհիվ ե պահ-
պանվում մաշկի վողջությունը: Այն մաշկը, վո-
րը շուտ ե ճեղքվում կամ պլոկվում, շատ շուտ
վարակվում ե զանազան մանրեներով:

Ճարպ քսած մաշկը փափուկ ե, ճկուն և
հեշտությամբ ե տանում ջրի, ողի ջերմության
և սառնության փոփոխությունները, իսկ չոր ու
կոշտ մաշկը վոչ:

Ամենքին լավ հայտնի յե, վոր վոչ թե մի-
այն մարդու մաշկն այլ և կենդանիների կաշին
ել ունի ճարպ. բացի այդ գիտեն, վոր ամեն
տեսակ կաշվեղեն լավ պահելու համար հարկա-
վոր ե նրան ճարպ քսել:

ԵԵՀԱԼԻ⁹ Ե ՄԱՅԻՆ ԹՎԱԿԱՑՈՒՄ ԺԱՐՄԻՒ
ՉԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ.

Մաշկի ամենաղլխավոր դերերից մեկն ել

մեր մարմնի ջերմության կանոնավորելն է:

Յերբ մարդ գտնվում է տաքացրած սենյակում կամ արևի տակ կամ յերբ լարված աշխատանք ե կատարում, նրա մարմնի տաքությունը բարձրանում է ավելի շատ, քան պետք է նրա համար։ Այդ ժամանակ մարդու արյունը շատ մեծ քանակությամբ է հոսում դեպի մաշկը։

Դրանից մաշկը տաքանում է և մարմնի ջերմության ավելորդը մաշկը տալիս է ողին անմիջապես կամ քրտինքի միջոցով վորից յեվ մարմինը սառչում է շնորհիվ նրան, վոր գոլորշիցող քրտինքը խլում է մարմնի ավելորդ տաքությունը։ Հակառակն է լինում, յերբ մարդ գրտնվում է ցուրտ տեղում։ Այս դեպքում մաշկի անոթները նեղանում են, արյունը մարմնի մակերեսույթից հոսում է դեպի ներքին գործարանները, մաշկը գունատվում է, մինչև անզամկապուում, վորովհետև մաշկի արյան արջանառությունը դժվարանում է։ Մաշկը կոչ է գալիս. մարդու մարկը ստանում է սագի կաշվի տեսք մաշկի, մազերի, մինչև անզամ աղվամազի, մկանները կրճատվում են, մազերը դուրս են ցցվում, իսկ այս բոլորի հետեանքով պակասում է մարմնի ջերմության դուրս գալը։ Այդ դրության մաշկի քրտինքի արտադրումն ել խիստ պակասում է։

Շնորհիվ մաշկի նկարագրած հատկությունների մարմնի ջերմությունը մնում է մշտական և հավասար դրության։ Բայց մաշկի այդ հատկությունն անսահման չե։ Նա ունի իր չափ ու սահմանը։

Ցուրտ յերկրներում, կամ հենց չափավոր յեղանակ (կլիմա)ունեցող մեր յերկրում մաշկն ի վիճակի չե պահպանել մարդու մարմնի տաքությունը, ուստի մարդիկ իրենց մարմնի ջերմությունը պաշտպանելու համար ստիպված են ծածկել իրենց մարմինը հազուստով, իսկ կենդանիներն պաշտպանում են իրենց ջերմությունը բրդով կամ փետուրներով։

Ենչպե՞ս ե մասկը պատպանում մարդուն զանազան վնասումներից։

Մաշկն ունի բազմաթիվ ներվեր, վորոնք զգում են տաքն ու ցուրտը, զգում են ցավ, յերբ մաշկը ստանում է հարված։

Մաշկի ներվերն այս բոլոր զգացումները փոխանցում են գլխի ուղեղին, վորն և կարգադրում է կատարել համապատասխան գործողություն մարմնի պաշտպանության համար։ Որինակ՝ մարդը տաք առարկային դիպչելիս իսկույն հետ ե քաշում ձեռքը կամ ցավ զգալիս հեռանում ե. յեթե ցավի զգացումը չը լիներ, մարդ

կարող եր մեծ վնասումներ ստանալ և հնարա-
վորություն չեր ունենաժամանակին պաշտպան-
վել դրանցից:

Մաշկի այդ հատկությունը կոչվում է շո-
շափումն, այդ պատճառով ել մաշկը համարվում
է շոշափելիքի գործարան:

ԵԵ՝ պետք ե խնամել մասկը

Ով մտածում է իր առողջության մասին,
պետք ե հսկի իր մաշկի և նրա կանոնավոր և
բնական աշխատանքի վրա:

Այս կանոնների պահպանությունը ցույց է
տալիս մաշկի առողջապահությունը:

Վորո՞նե ԵԵ այդ կանոնները

Պետք ե մաշկը հաճախ (իսկ նրա բաց մա-
սերը ամեն որ) մաքրել ճարպից, նրան միացած
կեղտից և մաշկի մակերեսային մեռած բջիջնե-
րից. այս բոլորը կիտվում են մաշկի վրա որվա
աշխատանքից հետո:

Մաշկը պետք ե մաքրել աշխատանքից ան-
միջաւես հետո, Մաքրելու ամենալավ միջոցը—
տաք ջրով և սապոնով լվացվելն է. տաք ջուրը
սրբում է ճարպն ու կեղտն և բաց ե անում
մաշկի ծակոտիները. բացի այդ սապոնը տար-
րալուծում է ճարպը, հալացնում է նրան ու

հեռացնում. ճարպի հետ միասին հեռանում են
կեղտը:

Լվացվելը մի ոգուտ ևս ունի. մաշկի տաք
ջրով տրոթելը գրգռում են նրան, արյան անոթ-
ները լայնանում են և այդպիսով բարձրանում են
մաշկի գործունեյությունը

Լվացվելուց հետո մաշկը սկսում է ավելի
լավ գործել, ավելի լավ ստանալ սնունդ և
ավելի լավ դուրս հանել մարմնի մեջ կիտված
ֆսասակար նյութերը:

Ամենքին ել լավ հայտնի յե թե՝ մարդ վոր-
քան լավ ե զգում իրեն բաղնիքից կամ տաք լո-
գանքից (վաննից) հետո: Մաշկի լավ գործու-
նեությունը նպաստում է և մյուս գործարան-
ների լավ աշխատելուն:

Ի՞նչ եւանակություն ունի մատկի մաքրությունը

Մաշկի մաքրումը ամենորյա լվացումներով
և ամեն շաբաթյա բաղնիքով ամենալավ կան-
խարգելիչ միջոցն ե մաշկի զանազան հիվանդու-
թյունների դեմ, վորովհետեւ այսպիսի խնամքը
պահում ե մաշկն առողջ, գործունյա և առույգ
գրության մեջ, վորն և խանգարում ե զանա-
զան մաշկախաների ծագումը:

Բացի այդ մաշկի մաքրուր պահելը կանխար-
գելում է և ուրիշ հիվանդություններ, վորոնք

մաշկի միջոցով են անցնում մարդուն. որինակ սիֆիլիսի թյունն անցնում է մարդուն այն տեսակ մաշկի միջոցով, վորը գտնվում է վատ դրության մեջ, վորի վրա կան պլոկվածք կամ քերծվածք։ Միբիրախտը, կարմիր քամին նույնպես անցնում են մարդուն մաշկի վրայի պլոկվածքով կամ քերծվածքով։

Մազերն ու յեղունգները նույնպես պետք ե մաքուր պահել և ժամանակ առ ժամանակ կտրել։

Չպետք ե մոռանալ, վոր մարդու ամենակեղտու տեղը մազերն ու յեղունգներն են, ուստի նրանց մաքրության մասին ավելի ևս պետք ե հոգալ։

Մաշկի մաքրության համար շատ մեծ նշանակություն ունի և սպիտակեղենի փոխելը։ Մաշկին կպած հագուստը պետք ե անպատճառ սպիտակ կտորից լինի, վոր նկատելի լինի կեղտն ու միջատները։ Սպիտակեղենը պետք ե փոխել շաբաթը գոնե մեկ անգամ։

**Ողի յեզ արեգակի ճառագայթների ճշանակությունը
մասկի համար։**

Մաշկի առողջ կրությանը շատ են նպաստում բաց ողն և արեգակի ճառագայթները։

Արեգակի ճառագայթներն և ամեն որ ստոր

Հուր քսումը շատ ամրացնում են մաշկը. իսկ
ամրացած մաշկը դժվար է պլոկվում և շուտ չի
վարակվում:

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱԾԿԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ

Առանձնապես պետք է ուշադրություն
դարձնել յերեխաների մաշկի վրա, վորովհետև
նրանց մաշկը շատ նուրբ է, շատ շուտ է վնաս-
վում և վարակվում: Յերեխաները հենց փոքր
հասակից պետք է իմանան մաշկի նշանակու-
թյան և նրա խնամքի մասին, վոր հենց իրենք
լավ հոգ տանեն իրենց մաշկի մասին: Յերե-
խայի մաշկի յուրաքանչուր քերծվածք և պլոկ-
վածք պետք է դրավի ծնողների ուշադրությու-
նը, վորովհետև այդ քերծվածքն ու պլոկվածքը
կարող է շատ հիվանդությունների մտնելու դուռ
դառնալ:

ԵՅԻ՞ց ԵՅ առաջ գալիս մածկի հիվանդությունները

Մաշկի հիվանդությունների մեծ մասն ա-
ռաջ է գալիս նրանից, վոր հիվանդության վա-
րակը ներս է մտնում մաշկի մեջ դրսից, ընա-
կալում է մաշկի մեջ և հիվանդացնում նրան:

Մաշկի այդ հիվանդություններն անցնում
են հիվանդ մարդուց և կենդանուց կամ վարակւ-
ված իրերից առողջ մարդուն, ուստի և կոչվո՞ր

Են նրանք վարակիչ հիվանդություններ։ Այս
տեսակ հիվանդությունների պատճառը (վարակը)
շատ փոքր կենդանի արարածներ են, վորոնք մա-
կաբույժներ են կոչվում։

Այդ մակաբույժները մտնում են մաշկի
մակերեսային շերտը և հիվանդացնում նրան, իսկ
մաշկի խորը մասերը, վորտեղ արյան անոթներ
շատ կան կարող են մտնել միայն մաշկի վորոշ
հիվանդությունների մանրեները (որինակ՝ սի-
րիրախտի, կարմիր քամու և այլն), վորոնք ա-
ռաջացնում են կազմվածքի ընդհանուր վարակում։

Ի՞նչ տեսակ են մասեկի հիվանդությունները

Նրանք շատ շուտ բուժվում են, յեթե շատ
շուտ ուշադրություն են դարձնում և շուտ են
դիմում բժշկին, և ընդհակառակը, դժվար են
բուժվում և վատ հետևանքներ են տալիս, յեթե
նրանց վրա իր ժամանակին և հարկավոր ուշադ-
րությունը չեն դարձնում, բացի այդ մաշկի վա-
րակիչ հիվանդություններով կարելի յե հիվան-
դանալ մի քանի անգամ։

Ինչու յեն օտա տարածվում մասեկի վարակիչ հիվան- դությունները

Վաղուց հայտնի յե, վոր վարակիչ հիվան-
դությունները մշտական զոյլություն ունեն այն-

տեղ, վորտեղ կա աղքատություն, ագիտություն և
ընակարանային նեղվածքություն։ Նույնպես
հայտնի յե բոլորին, վոր մաշկի խնամքի ամենա-
հասարակ միջոցներն անգամ բավական են վա-
րակիչ հիվանդություններից պաշտպանվելու
համար։

Բայց դժբախտաբար դժվար ե գործադրել
այդ հասարակ միջոցներն այնտեղ, վորտեղ մար-
դիկ ապրում են խիտ, լավ սնունդ չեն ստանում,
սակավ են լվացվում, սակավ լողանում, ուշ-ուշ
են փոխում սպիտակեղենն և միշտ տնքում են
ծանր ու քայքայիչ աշխատանքի տակ։ առանձ-
նապես տուժում են այդ հիվանդություններից
չքավորների, աշխատավորների, պրոլետարների
յերեխաների մաշկը։

**Վորտեղ են օատ տարածված մաշկի հիվանդութ-
յունները**

Վարակիչ հիվանդություններն ընդհանրա-
պես և մաշկինը մասնավորապես շատ են տա-
րածված գյուղերում, վորտեղ հակառողջա-
պահական դրությունը սուր ե. յեթե դրան ա-
վելացնենք և գյուղի աղքատությունն ու տգի-
տությունն, այն ժամանակ հականալի կլինի թե
ինչու մաշկի հիվանդությունները համարվում են
չքավորների հիվանդություն։

Պայքար մասկի վարակիչ հիվանդուգյուն-
ների գեմ

Ինչպես բոլոր վարակիչ հիվանդությունների, այնպիս ել մաշկի վարակիչ հիվանդությունների պայքարը պահանջում է կանխարգելիչ միջոցներ, վորոնք յերկու տեսակի յեն՝ անձնական և հասարակական։

Անձնական կանխարգելիչ միջոցները մաքրություն բնակարանի, մաքրություն մարմնի, մաքրություն սպիտակեղենի և հագուստի, մաքրություն աշխատավայրի և մաքրություն գործի մեջ և այլն, իսկ հասարակական միջոցները՝ լայն մասսաների լուսավորություն, բնակարանների բարելավում, լավ ջրի մատակարարում, սննդի լավացում, յերեխաների ինսամբ, մայրերի լուսավորություն և այլն։ Սա ե խորհրդային բժշկության հիմքը—այսինքն, լավացնել կենցաղի և աշխատանքի պայմանները, վոր չինեն հիվանդություններ, վորովհետև դրանք, մանավանդ վարակիչ հիվանդությունները կապ ունեն կենցաղի և աշխատանքի հետ։

II

ՄԱՇԿԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Ա. մաշկի մակաբույժային հիվանդությունները

Ք Ս Ս.

Ինչպես են նա տարածված Հայաստանում Մաշկի ամենատարածված հիվանդություններից մեկը քոսն ե։ Հայաստանում 1925 թվին բժիշկներին դիմել են 12,448 անձ քոսով հիվանդ, իսկ 1924 թվին 22,638 անձ. իհարկե, այս թվերը ցույց չեն տալիս բոլոր հիվանդների քանակը։ Բարեբախտաբար նա շատ հեշտ բուժելի յե և շատ հեշտությամբ ել կարելի են նրանից պաշտպանվել։

Ինչպես ել լինում յեվ ինչի՞ց ե առաջ դալիս քոսը։

Հիվանդացած մաշկը սաստիկ քոր ե գալիս և շատ անհանգստացնում հիվանդին։

Քոսն առաջ ե գալիս կենդանի մակաբույժից, վորը կոչվում ե քոսի տիզ։

Այս կենդանին հասարակ տչքով հսկիվ կարելի յե տեսնել. նա փոքրիկ կետի տեսք ունի և քորոցի գլխից անզամ փոքր ե։ Մանրադիտակով նայելիս նա նմանում է կրյային



A 1
8681

Նկար 2.
Քոսի տիզ:

Եզր վորձից մեծ է, վորձը մաշկի մակերես-
վույթի վրա յե ապրում և մաշկի մեջ չի մտնում:
Մաշկի յերեսին մի փոքրիկ փոսիկ ե գոյացնում,
այստեղ ել ապրում և եղին բեղմնավորելուց
հետո սատկում:

Եզր կրծում ե մաշկի վերի շերտը, մտնում
մաշկի մեջ և ձու ածում կույտերով թվով 24-36
հատ:

Զվիկներից դուրս ե գալիս թրթուռ, վորը
մի քանի անգամ փոխում ե իր շապիկն և հետո
դառնում հասունացած մակաբույժ—տիզ:

Այդ ժամանակ եզր շարունակ գոյացնում ե
մաշկի մեջ նորանոր փոսիկներ, վորոնք լցված
են լինում ձվիկներով և տիզի կղկղանքով:

Այդ փոսիկները, տիզի գնացած ուղին մաշ-
կե մեջ, դրսեից լավ յերեսում են. Դրանք գոր-
շագույն, վոլորուն զոլիկներ են, յեղունզի մեծու-

թյան և քորոցի հաստության։ Զոլիկի վերջին
կա սպիտակավուն պղպճակ, վորը ցույց ե տա-
լիս, վոր տիզն այնտեղ ե նստած։

Տղի շարժվելու ժամանակ առաջ ե գալիս
սաստիկ քոր, վորովիետև տղի մարմնի վրա կան
մեծ քանակությամբ փշիկներ, վորոնք գրգռում
են մաշկը և քոր առաջացնում. տիզը ցերեկը
հանգիստ ե մնում, յերբ հիվանդը շարժողության
մեջ ե, իսկ գիշերն յերբ մարդ հանգիստ ե, տի-
զը շնորհիվ անկողնու տարության—սկսում ե
առաջ սողալ և քոր առաջացնել։ Այդ ե պատ-
ճառը, վոր հիվանդներն առավելապես գիշերներն
են անհանգիստ լինում։


Մարմնի բոլոր տեղերի մաշկն ել յենթակա
յե քոսի տղին, բայց նա ընտրում ե և նա-
խապատվություն ե տալիս մարմնի այն տեղին,
վորի մաշկը բարակ ե և հեշտ խոցելի, որինակ՝
վոտների և ձեռքերի մատների արանքը, կոնա-
տակերը, սեռական գործարանների վրայի մաշ-
կը, կանաց ծծերի տակ և այլն։

Չնայած, վոր քոսի տիզը գտնվում է մարմնի
միայն վորոշ տեղերում, բայց հիվանդը քորում
ե ուրիշ տեղեր ևս և այդպիսով քորը բռնում ե
հիվանդի ամբողջ մարմինը։

Քոսի տղի առաջացրած և հիվանդի քորե-
լուց առաջ յեկած գրգռումների պատճառով

մաշկի վրա գոյանում են բշտիկներ, վորոնք ծածկված են լինում արյունոտ և թարախոտ կեղևով:

Այդ ճանգովածքները միշտ կեղտոտվում են յեղունկով քորելիս. այդ պատճառով ել ահազին տարածության վրա հայտնվում են նորանոր խոցիկներ, որինակ ձեռքի վրա



Նկար 3.

Քոսով հիվանդի ձեռք.

Ի՞նչպնս են վարակվում բոսով

Քոսով հիվանդանում են թե յերեխաներն և թե մեծերը, Առողջը վարակվում է հիվանդից շատ մոտիկ շփումից հետո, որինակ մի տեղաշրջի մեջ ընելուց, ձեռք տալուց. Կարելի յե վարակվել սեռական հարաբերության ժամանակ:

Բացի այդ հիվանդությունը կարող է անցնել հիվանդի հագուստի ու սպիտակեղենի միջոցով:

Բաղնիսում նույնպես կարելի յե վարակվել
քիսի և սրբիչի միջոցով։ Շատ հաճախ վարակ-
վում են տնային կենդանիներից։

Ինչպե՞ս բժշկել բոսք

Համեմատաբար շատ հեշտ ե քոսի բժշկելը,
մանավանդ, յեթե հիվանդությունը բժշկեն հենց
սկզբից։

Շատ լավ ե ոգնում ծծմբի (քուգութի)՝
ոծանակը (մարհամը), վորը սպանում ե քոսի
տղին և հեռացնում ե մաշկի վերին շերտը։

Ծծմբի ոծանակն ամենքը կարող են պատ-
րաստել։ Հարկավոր ե վերցնել մեկ ութերրոր-
դական գրվանքա (¹/₈ գրվ) ալանի կարագ և
մեկ մսխալ ծծումբ։

Յեթե ծծումբը կտորով ե, պետք ե լավ
մանրացնել ու փոշի դարձնել նրան. Փոշի դարձ-
րած ծծումբը լավ տրորել կարագի հետ։

Կարագի փոխարեն կարելի յե և ճրագու
(թարմը) գործածել, միայն ճրագուն պետք ե
հալել, կրակի վրայից վերցնել ու մի փոքր անց՝
ծծումբը ձղել մեջն ու լավ տրորել։

Ինչպե՞ս բանացնել ոծանակը

Այդպես պատրաստած ոծանակը քսել հի-
վանդ մաշկին, որական 2 անգամ, մեկ առավո-

տյան, մեկ ել յերեկոյան միայն վաղորոք պետք է լվանալ մաշկը, մանավանդ ձեռքերի մաշկը սապոնով և տաք ջրով. յերեք որ քսելուց հետո տաք ջրով և սապոնով լողանալ, վորից հետո հագնել մաքուր սպիտակեղեն, իսկ վրայի հագուստը, յեթե կարելի յե լվանալ տալ, պետք ե լվանալ, յեփացնել ու հետո հագնել, իսկ յեթե անկարելի յե լվանալ տալը, պետք ե արեին տալ առնվազը 2-3 ժամ և թափ տալ թոնրի վրա ու հետո հագնել։ Բացի այդ պետք ե անկողինն ևս լավ լվանալ ու հետո գործածել։

Այս անհրաժեշտ ե անել նրա համար, վոր ոծանակի քսելուց միջատների վոչնչանալուց հետո առողջացած հիվանդը նորից չվարակվի իր շուրերի վրա մնացած միջատներից։

Վորքան շուտ սկսել բուժումն այնքան լավ, ուստի հենց վոր մատերի արանքին պղուկներ են յերեսում ու մաշկը քոր ե գալիս, պետք ե անպաճառ առանց ուշացնելու դիմել բժշկին ոծանակ ստանալու համար, կամ ինքը հիվանդը տանը պետք ե պատրաստի ոծանակն և սկսի բժշկվելը, վոր շուտ ազատվի հիվանդությունից քոսից։ Հիվանդներին բժշկելիս ոծանակ քսողը պետք ե լավ լվացվի տաք ջրով ու սապոնով, վոր ինքն ել չվարակվի։

2. ՎՈՉԼՈՏՈՒԹՅՈՒՆ

ԻԵՒՖ^o ե լինում վոջլոտությունը

Վոջլոտությունն առաջ ե գալիս կեղտից և աղքատությունից։ Վոջլոտությունը հետևանք է կյանքի ծանր պայմանների, հետևանք է ամենաանհրաժեշտ և ամենատարրական հարմարությունների բացակայության, որինակ՝ ջրի, սալոնի, ընակարանի, հագուստի բացակայության կամ սակավության, գլխավորապես և անկուլտուրականության։

Վոջլոտությունն ես առավել սաստիկ ե լինում պատերազմի, հեղափոխության, քաղաքացիական կռիվների ժամանակ, յերբ ժողովրդի ամբողջ զանգվածները բռնված են լինում վոջլոտությամբ, առաջ են գալիս շատ հիվանդություններ, վորոնց փոխաղրում են վոջիլները հիվանդից առողջ են։

Շատ չի անցել այն որից, յերբ բծավոր տիֆը կոտորածներ եր անում ամբողջ Հայաստանում, յերբ հիվանդանոցներում ու ապաստարաններում վոջիլներին կարելի յեր ժողովել բռներով։

Այդ ե պատճառը, վոր բժշկության մեջ հետադարձ ու բծավոր տիֆերը անվանվում են վոջլային տիֆեր։

Քանի տեսակ վոշիւ կա

կա յերեք տեսակ վոշիւ



Գլխի
վոշիւ

Յայլի
վոշիւ

Շորի
վոշիւ

Նկար 4.

Գլխի վոշիւ

Գլխի վոշիւը զանազան գույնի յե լինում.
Նրա գույնը կախված ե այն մարդու մազերի
գույնից, վորի վրա գտնվում ե նա. բեվեռի
մոտ ազգաբնակության վոշիւը—սպիտ ակ ե,
իսկ նեղըներինը սև:

Այդ բնության որենք ե և հատուկ բոլոր
կենդանիներին. ապրում են այն կենդանիները,
վորոնց գույնը համապատասխան ե շրջապառող
միջավայրին:

Ենչպե՞ս ե նա բազմանում

Վոշի եղը վորձից մեծ ե և սաստիկ բեղմ-
նավոր:

Վեց որվա մեջ եղ վոջիլն ածում ե մոտ 60 ձուիկներ, վրոնցից ութ որ հետո դուրս են զալս պստիկ վոջիլներ:

Այդ վոջիլները մի քանի որից հետո հասունանում են, բեղմավորվում ու սկսում ձուդնելը:

Գլխի վոջլի ձուն կոչվում ե անիծ, վորը մի տեսակ մածուծիկ հյութով կոլչում ե մազերին ու դժվարությամբ պոկ գալիս:

Ե՞նչ վճառումներ են տալիս վոջիլները

Գլխի վրա վոջիլների ամենասիրած տեղը դադաթն ե ու ծոծրակը, վոջիլները գրգռում են գլխի մաշկն ու առաջացնում քոր: Յեզս առավել շատ են լինում քորի ճանապարհըները ծոծրակի մազերի յեզրին և հենց ծոծրակի վրա:

Կեղտուու յեղունկներով քորելուց գլխի մաշկի վրա առաջ են գալիս բորբոքումներ և թարախու խոցիկներ:

Գլխի վոջիլն ամեն հասակի մարդու վրա կարող ե լինել, բայց առավելապես յերեխաների գլխի վրա յե լինում, վորոնց մաշկի նրբության շնորիվ խոցիկներ և բորբոքումներ մաշկի վրա ավելի շատ են լինում:

Յերբեմն թարախու խոցիկներն այնքան շատ են լինում, վոր նրա վրայի չը խուզված

մազերը կպչվում են միմիանց ու թաղիքի տեսք
ընդունում, թախկուճ ե ստացվում:

Ինչպես բժեկվել գլխի վոչիլներից

Վոջիլներին վոչնչացնելու համար պետք է
գործածել նրանց սպանող ճարեր:

Տաք ջրով և սապոնով գլուխը լվանալուց
հետո գլխին քսել նավթ, կիսով չափ յուղ խառ-
նած:

Բաց ավելի լավը հետեյալ միջոցն ե:

Յերբ շատ շատեն վոջիլները, պետք է
գլխի մազերը բոլորովին հեռացնել, մանավանդ
յերբ կա թախկուճ. յերբ վոջիլները քիչ են գլու-
խը լվանալուց հետո պետք է սանրել նոսր սան-
րով և ամեն անգամ սանրելուց հետո սանրը
թաթախել յեռացըրած ու շատ տաք քացախի մեջ,
վորը սպանում է սանրի վրա մնացած վոջիլնե-
րին ու նրանց անիծները:

Կարելի յե գործածել և սնդիկի ոծանակ,
բայց զգուշությամբ:

Առանձնապես պետք է ուշադրություն դարձ-
նել յերեխաների գլխի մաքրության վրա, վո-
րովինետև յերեխաներն առհասարակ շուտ են ըն-
դունում վոջիլներին ընկերներից, մանավանդ
դպրոցներում:

Մաքուր ընտանիքում յերեխաների գլխի

Վրա վո՞ջիլ չի լինում.

Առողջապահական տեսակետից յերեխաները
չպետք ե ունենան յերկար մազեր։

Շորի վոջիլ

Շորի վո՞ջիլը սովորաբար հագուստի և սպիտակեղենի վրա ե լինում. Նա գլխի վրա ամենաին չի լինում։ Շորի վո՞ջիլը բնակվում է հագուստի և սպիտակեղենի ծալքերում մարմնի հետևյալ տեղերում՝ պարանոցի վրա, ծոծրակի, նստելասեղի ու գոտկատեղի վրա։

Եթ վո՞ջիլը դնում ե իր ձվիկները (անիծը) վոչ թե մարմնի վրա, այլ սպիտակեղենի և հագուստի ծալքերում, վորոնք կպած են մարմնին. Վո՞ջիլը սնունդ ե ստանում մարդուն կծելով. Հետեւի վոտներով կպշում ե սպիտակեղենին, իսկ առաջին վոտներով մարմնին և սուր խայթիչով ծծում ե մարդու արյունը։

Ի՞նչ վեասներ են տալիս մարդուն վոջիլները

Վո՞ջիլի կծումն առաջացնում է քոր, մաշկն գրգռվում ե և դրանից բորը սաստկանում։

Ուժեղ քորելու պատճառով առաջանում են ճանգռվածքներ, վորոնք յեկունկների տակի կեղտից վարակվում են, բորբոքվում և տալիս թարախով լցված մեծ ու պստիկ խոցիկներ։

Վոջային տիֆերը տարածում են հենց այդ վոջիները. ծծելով հիվանդի արյունը վոջիները վարակվում են տիֆի թույնով, մանրեներով, վորոնք վոջին մսաս չեն հասցնում. մի քանի որից հետո այդ վոջին անցնում ե առողջի վրա, կծում ե նրան և, կծած տեղում տրորվելով թողնում ե իր կեղտոտությունն ու հյութերը, վորից և վարակվում ե առողջը:

Ահա թե վորքան վնասակար են մարդու համար վոջիները:

Ենջպես կովել ուրի վոջիների գեմ

Շորի վոջիների դեմ կովելու ամենալավ միջոցը՝ անխնա կոտորել նրանց, պահպանել մարմինի մաքրությունը, հագուստի և սպիտակեղենի մաքրությունը: Շաբաթը մեկ անգամ փոխել սպիտակեղենը, լվանալ ու յեփացնել տաք ջրով, իսկ չորացնելուց հետո լավ հարթուկել տաք հարթուկով (ութոյով): Ջրով և սապոնով հագուստը շուտ շուտ մաքրել:

Միջատասպան գործիքներով կոտորել վոջիներին:

Յեթե չկան միջատասպան գործիքներ սկետք ե շուտ շուտ թափ տալ հագուստն ու շորերը (անկողինն ու մյուս շորերը) տաք թոնրի վրա և հաճախ արեին տալ:

Մաքրասեր քնտանիքում վոջի չկա

Յայլվոջիլ

Այս վոջիլը շատ փոքր է և մարդու մարմնի մաշկի դույնի, այնպես վոր շատ դժվար է նրան ջոկելը։ Նա քորոցի գլխի չափ հաղիվ լինի և առավելապես տպրում է սեռական գործարանների մազերի մեջ, դրա համար ել կոչվում է ցայլվոջիլ։ Ցայլքը սեռական գործարանների մազոտ տեղն է։ Թեև ցայլվոջիլը սովորաբար ցայլքի վրա յել լինում, բայց նա կարող է անցնել և փորի ու կրծքի վրայի մազերին, կոնատակերի մազերին և մինչև անգամ հոնքերին ու արտևանունքներին, բայց գլխի վրա յերբեք չի լինում։ Ցայլվոջիլն անցնում է մեկից մյուսին սեռական հարաբերության ժամանակ և ուրիշ ճանապարհով, որինակ՝ հագուստի միջոցով։

Ցայլվոջիլը կծում է և առաջացնում քոր, վորը ճանգովածքների չի փոխվում։

Ենչպես կովել ցայլվոջիլների գեմ

Ցայլվոջիլներին շուտ վոչնչացնելու համար, հարկաւոր է խուզել (ավելի լավը - ածիլել) սեռական գործարանների վրայի մազերը, բսել որական 2 անգամ սնդիկի ոծանակ (մարհամ) ու 3—4 որից հետո լողանալ։

Ցայլվոջիլներին կոտորելու տեսակետից շատ լավ է և Յերևանի բաղնիքների ցեխը։

Այդ ցեխը պարունակում է կիր և ունի
մազերը վերանող հատկություն։ Կարճ խուզած
մազերին մի քանի որ սնդիկի ոժանակը քսելուց
հետո, գնալ բաղնիք ցեխ դնել ու լվանալ. Դրա-
նից հետո թափվում են մազերը, վորոնց հետ
միասին և ցայլվոջիլները ու նրանց անիծները.
Միայն յերեսին ու գլխին չի կարելի քսել այդ
ցեխից, վորովեհտե աչքի մեջ կարող ե ընկնել
ցեխի մի կաթիլ, վորից կարող ե բորբոքվել աչ-
քըն ու վնասվել։

Բ. ՄԱՇԿԻ ՍՆԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչո՞ւյեն այդ հիվանդությունները կոչվում սնկային

Մաշկն ունի հիվանդություններ, վորոնք
առաջ են գտլիս բուսական աշխարհի մանրե-
ներից, վորոնք սնկեր են կոչվում այն պատճա-
ռով, վոր այդ մանրեները բազմանում են սնկի
նման. այդ մանրեներն նույնպես անտեսանելի
յեն հասարակ աչքով։

Բնության մեջ շատ տեսակ սնկային ման-
րեներ կան, վորոնք նույնպես ինչպես և բակ-
տերիաները յերկու տեսակի յեն՝ չարվորակ և
բարվորակ։

Բարվորակները նրանք են, վորոնք անտե-
սության մեջ շատ մեծ դեր են խաղում, որի-

նակ մի քանի մերանները (թթխորը), իսկ չար-
վորակները մեծ վսաս են հասցնում թե մարդ-
կանց, թե կենդինանիներին և թե մինչև անդամ
բույսերին, որինակ՝ խաղողի թփի, բամբակի և
այլ ոգտակար բույսերի մի քանի հիվանդու-
թյուններն առաջանում են վսասակար, չարվորակ
սնկերից։ Կան սնկեր, վորոնք հիվանդացնում են
մաշկը. կան և անպիսիները, վորոնք հատկա-
պես վսասում են մազերը։

Մնկային հիվանդությունները շատ վարակիչ
են, բայց առավելապես վարակիչ են թուլակազմ
և վատ սնունդ ստացող յերեխաների համար։

Խուզող կամ ածիլող վորքին (մկնառամ)

Մաշկի սնկային հիվանդություններից մեկը
խուզող վորքինն ե, վորը շնորհիվ մազերի խուզ-
ված տեսքի կոչվում ե խուզող կամ ածիլող.
այս հիվանդության ժողովրդական անունը—
մկնառամ ե, այսինքն՝ մի հիվանդություն, վորը
մկան ատամի պես կտրում ե մազերը։

Այս հիվանդությունը շատ ե տարածված
նաև տնային կենդանիների մեջ, որինակ շների
ու կատուների մեջ, վորոնցից և զլիսավորապես
անցնում ե մարդուն, մանավանդ յերեխաներին։

Այս հիվանդությունը թեև մազերի հիվան-

դություն ե, բայց կարող ե լինել մաշկի և յեղունկների վրա:

Ի՞նչ նշանակում է այդ հիվանդությունը

Վարակվելուց մի քանի որ հետո սունկ-մանրեյի ընկած տեղը մաշկի վրա հայտնվում են փոքրիկ կարմրավուն կլոր բծեր, վորոնց շուրջը դուրս են գալիս մանր բշտիկներ։ Բծերը շատ շուտ թեփուառմ են։

Յերբեմն հիվանդ մաշկի վրա գոյանում են փոքրիկ խոցիկներ, լցված թարախով։ այդ խոցիկների բուժման համար յերկար ժամանակ ե պետք և մեծ համբերություն։

Այդ հիվանդությունն ամենից շատ գլխի մազերի վրա ե լինում։ սովորաբար գլխի վրա հայտնվում են խուզված կլոր տեղեր, վորոնք մազից զուրկ են, ծածկված են կրծված մազերի դուրս ցցված մնացորդով։

Այդ հիվանդությունը շատ ե տարածված մանկատներում և յերբեմն համաճարակի բնույթ ե ստանում, անցնելով յերեխաներից մեծերին, թեև շատ սակավ։

Ինչպես են վարակվում մկնաթամով

Մկնաթամի մանրեներն անցնում են հիվանդից առողջին կամ անմիջական շփման միջոցով, որինակ՝ հիվանդի գլխուխը կպչում ե առողջի

գլխին կամ հիվանդի իրերի միջոցով որինակ՝
սպիտակեղենի, անկողնու, թաշկինակի և այլ
իրերի միջոցով։

Այս տեսակետից մեծ նշանակություն ունի
հիվանդի հետ միասին մի անկողնում ընելը,
հիվանդի սանրով սանրվելն և այլն...

Ինչպես պայքարել մկնատամի դեմ

Հսկել տնային կենդանիների մաքրության
վրա, հսկել վոր յերեխաները շփում չունենան
հիվանդ կենդանիների հետ։

Փոխել սպիտակեղենը, մաքրուր պահել մաշկը։
Մանկատներում հաճախակի հետազոտել յե-
րեխաներին, վոր ժամանակին մեկուսացնել հի-
վանդներին և որ առաջ բժշկել նրանց՝ տարած-
ման առաջն առնելու համար։ Հիվանդների իրե-
րն առողջների համար չգործադրել, մանավանդ
սանրն ու սպիտակեղենը, իսկ բծերն յերեալուն
պես պետք ե դիմել բժշկին, ժամանակին
միջոցներ ձեռք առնել հիվանդության տարած-
ման դեմ, վոր ուրիշները չվարակվեն։ Հիվանդ
յերեխային գլխարկ հաղցնել սպիտակ կտորից
կարած, վորը միշտ պետք ե գլխին լինի. այդ
գլխարկը հաճախ լվանալ ու փոխել։ Հիվանդու-
թյունը շատ դժվար ե բժշկվում, մանավանդ

գլխի վրա, ուստի պետք ե զգույշ լինել վարակ-
վելուց:

Գոնջ (գոնջուկ—բաչալ—օավուս)

Գոնջը նույնպես վարակիչ հիվանդություն
և գլխավորապես լինում ե գլխի մաշկի վրա:
Գոնջուկը շատ ե տարածված այն տներում,
վորտեղ առողջապահական պայմանները վատ են,
վորտեղ արևի ճառագայթները չեն ընկնում,
վորտեղ բնակվողները շատ խիտ են ապրում և
մաքրության կանոնները չեն պահպանում:

Ինչպի՞սի նօաներ ունի գոնջը

Գոնջը, ինչպես և մկնատամը, վսասում ե
մազերը. սկզբում յուրաքանչյուր մազի շուրջը
դուրս են գալիս դեղին կետեր, վորոնք մաշկի
վերին շերտի տակն են գտնվում:

Շատ շուտ այդ կետերը մեծանում են,
կոշտանում, հաստանում և դառնում դեղին գույ-
նի կեղանք, վորը յերբ դուրս ե գալիս
մաշկի յերեսը ստանում ե դեղնավուն սպիտակ
գույն:

Մկնատամի կեղանքը թեփի նման ե, մոխ-
րագույն, մանր և բարակ, իսկ գոնջի կեղանքը
հաստ ե, մեծ ու դեղին գույնի: Շատ հաճախ
հիվանդությունը բռնում ե ամբողջ գլուխը, մա-

զերը թափվում են, վատ հոտ ե գալիս զլխից,
(մկան հոտ) հիվանդն այլանդակվում ե և ամեն
կերպ աշխատում առանձնանալ, մարդու չտեսնել,
վորը շատ վատ ե ազդում հիվանդի հոգեկան
դրության վրա:

Մազերի թափված տեղում հիվանդության
անցնելուց հետո այլ ևս մազ չի բնում և հի-
վանդը մնում ե ճաղատ (քաջալ), մանավանդ
յերը հիվանդությունը լինում ե ծանր տեսակի
և տեսում ե յերկար, յեվ յերը չեն բժշկում ժա-
մանակին. ինչպես և մկնատամը, գոնջուկը կարող
ե լինել և մարմնի ուրիշ տեղերի մաշկի և յե-
ղունկների վրա:

Գոնջը միայն զլխի մազոտ մասի վրա յե-
մեծ վսասումներ տալիս և դժվար բժշկվում, իսկ
մարմնի ուրիշ տեղերի մաշկի և յեղունկների
գոնջը այնքան ել ծանր չի ընթանում և շատ
շուտ բժշկվում ե:

Ինչպես են վարակվում գոնջով

Մեծերը դժվար են վարակվում գոնջով,
վորը զլխավորապես տարածված ե յերեխաների
մեջ դպրոցներում, մանկատներում:

Գոնջն անցնում ե հիվանդից առողջին շփման
միջոցով կամ հիվանդի գործածած իրերի միջո-
ցով, մանավանդ հիվանդի սանրի միջոցով:

Յերեխաները մեծ մասամբ վարակվում են տնային կենդանիներից, կատուներից, շներից, հավերից և այլն...

Ավելի շատ յենթակա յեն հիվանդության տյն յերեխաները, վորոնք թուլակազմ են և ապրում են հակառողջապահական պայմաններում։

Ինչպե՞ս են բուժում գոնջը

Գոնջն յերեալուն պես պետք է աչքաթող չանել, այլ իսկուրն դիմել բժշկին։

Չպետք է մոռանալ, վոր միջոցների ուշ ձեռք առնելու հետեանքով հիվանդությունը կարող է տարիներ քաշել և մեծ վնասներ հասցնել հիվանդին։

Բժշկության համար զանազան միջոցներ կան. յերբեմն ճարեր են գործ դնում քսելու համար, յերբեմն մազերն են արմատահան անում. վերջերս սկսել են բժշկել գոնջն, ինչպես և մըկնատամը Ռենտգենի ճառագայթներով (վորոշ տեսակի ելեկտրական ճառագայթներ), վորն ամենալավ միջոցն է բժշկության տեսակետից։

Վոր միջոցն է ավելի լավը, ոտ կընտրի այն բժիշկը, վորին պետք է դիմի հիվանդը։

Ինչպե՞ս պայքարել գոնջի գեմ

Ամեն մարդ պետք է լավ իմանա, վոր առ-

հասարակ ավելի հեշտ ե վարակիչ հիվանդություններից պաշտպանվելը, քան բժշկվելը, ուստի ամեն կերպ պետք ե աշխատել միջոցներ ձեռք առնել չվարակվել գոնջով։

Կանխարգելիչ միջոցները յերկու կարգի յեն, հասարակական և անձնական։

Հասարակական միջոցները՝ բարելավել ազգաբանակության կենցաղի պայմանները. հսկել և շուտ շուտ հետազոտման յենթարկել մանկատներն ու դպրոցները, մանավանդ փակ դպրոցները։

Անձնական միջոցներ՝ մաքուր պահել գլուխը, շաբաթ 1—2 անգամ լվանալ տաք ջրով և սապոնով. գլխի մազերը խուզել շատ կարճ, մանավանդ յերեխաների գլուխը, խուզելիս ուրիշի մկրատ չգործածել, ուրիշի սանրով չսանրվել, ուրիշի գլխարկ չծածկել կամ իր գլխարկը ուրիշին չտալ, ուրիշի անկողին, մանավանդ բարձ, և ուրիշի սպիտակեղեն չգործածել։

Հեռու մնալ տնալին կենդանիներից և գոնջով հիվանդներից։

Գոնջից կասկածելի հիվանդներին առանձնացնել. հազցնել կտավից կամ քաթանից կարած գլխարկ և ուղղել քննության. իսկ հիվանդներին անմիջապես տանել բժշկի մոտ և կանոնավոր կերպով բժշկել։

Գ. ՄԱՇԿԻ ՎՈԶ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Զ Ո Ւ Կ Ն Ե Ր

Խ°Ե, Բան ե պզուկը

Մաշկի վրա հայտնվում են փոքրիկ ուռուցքներ, կարմրավուն, հաճախ և մաշկի գույնի, կորեկի կամ բրնձի հատիկի մեծության. յերբեմն այդ ուռուցիկը ցավում ե. մի յերկու որից հետո ուռուցիկի ծայրը դեղնում է կամ սևանում, սեղմելուց հետո միջից դուրս ե գալիս թարախոտ ճարպ, յերբեմն և արյուն:

Մենք արդեն գիտենք, վոր մաշկն ունի ճարպային գեղձիկներ, վորոնց ծորանը բացվում է մաշկի մակերեսույթի վրա:

Մաշկի վրա գտնվող փոշուց, կեղտից, քրտինքից և զանազան մանրեներից այդ ճարպային գեղձիկների ծորանը փակվում է, ճարպը կիտվում է գեղձիկի մեջ և գոյացնում պզուկ:

Պզուկների շատությունը կազ ունի կազմվածքի արյան ընդհանուր շրջանառության և աղիքների անկանոն գործունեյության հետ:

Պզուկների գոյանալն շատ ե նպաստում յերեսին փոշի ցանելը. այս վերջին հանգամանքն առավելապես կտնանց յերեսի պզուկների գոյանալու պատճառն ե:

Աչքի կոպերի վրա գարուկը նույնպես պզուկ

Ե. կոպի յեղըի ճարպային գեղձիկի անցքի վակվելուց ե առաջանում գարուկը:

Ինչպես վոչնչացնել պղուկները

Յերեսին փոշի չցանել.

Յերեկոները քնից առաջ սապոնով և տաք ջրով լվացվել ու մի փոքրիկ կտոր բամբակով մաքուր սպիրտ կամ ողի քսել մաշկին:

Տաք ջրով ու սապոնով լվացումը մաքրում է կեղտը, իսկ սպիրտը կամ ողին հալեցնում ավելորդ ճարպն ու այդպիսով ճարպային գեղձիկների ծորանը չի խոցվում ճարպով ու կեղտով և պղուկ չի գոյանում: Իսկ յեթե պղուկները կապ ունեն արյան շրջանառության և տղիքների կանոնավոր գործունեյության խանգարման հետ, պետք է դիմել բժշկին և բուժել այդ խանգարումները, վոր անհետանան պղուկները:

ԿԱՅԾՈՒՌԻԿ (ՖՈՒԲՈՒՆԿՈՒԼ, ԶԻԲԱՆ)

Ի՞նչ ե կայծուռիկը

Յերբեմն մաշկի ճանգովածքների ուժեղ քորելուց մաշկը բորբոքվում է, կամ ճարպային գեղձիկի բորբոքումն ուժեղանում է ու անցնում մաշկին և գոյանում է բորբոքված մեծ կոշտուկ, վորը կոչվում է կայծուռիկ, կամ ինչպես ժո-

ղովուրդն ե անվանում «Հիբան»:

Ամենից շատ կայծուռիկը լինում ե պարանոցի վրա, կոնսատակերին, գոտկառեղի և նստելատեղի վրա:

Այս տեղերն ամենից շատ են քրտնում ու ամենից շատ կեղտոտվում, դրա համար ել կայծուռիկներն այդ տեղ հաճախ են դուրս գալիս:

Կայծուռիկը^{ու} կզբում կարմիր գույնի յե և ցավում ե. Նա մեծ կոշտուկ ե, վորի ծայրին դուրս ե ցցված մազը: Կայծուռիկն որեց որ մեծանում ե և հասնում աղավնու ձվի մեծության:

Մի քանի որից հետո ուռուցքի գլխին գոյանում ե բշտիկ թարախով լցված, վորը մի 2 որից հետո պատռվում ե ու թարախ տալիս. թարախի հետ միասին վայր ե ընկնում և մաշկի մեռած մասը. մի քանի որից հետո լավանում ե և կայծուռիկի տեղում մաշկի վրա գոյանում ե սպի, վորը ցույց ե տալիս թե այնտեղ կայծուռիկ ե յեղել մի քանի որ առաջ:

Յերբեմն կազմվածքի ընդհանուր թույլության պատճառով կայծուռիկները շատանում են, կամ մեկն անհետանում ե մյուսն ե դուրս գալիս:

Յերբեմն և կայծուռիկը շատ ե մեծանում ու շատ ե խորն ընկնում, այնպես վոր թարախակույտի կերպարանք ե ընդունում:

Ենչպես կովել կայծուռիկների զեմ.

Կայծուռիկներից ազատ լինելու համար հարկավոր ե լավ խնամել մաշկը, մաքուր պահել նրան, հաճախ բաղնիք գնալ, հաճախ փոխել սպիտակեղենը, ամրացնել մաշկը սառը ջուր քսելով և արևի տակ բաց պահելով (արևակեղ դարձնելով):

Կայծուռիկն յերևալուն պես տնային միջոցներ չղործադրել, այլ դիմել բժշկին, վոր գործ դնի գիտական և կարուկ միջոցներ շուա առողջանալու և տանջանքներից շուտ ազատվելու համար:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045755

ԳԻՆՆ Ե 10 ԿՈՊ.

[124.]

A I
8681